Հավելված N 2
2024 թվականի փետրվարի 07-ին կնքված
«ԴՏՊ-11414-11018/24» ՍՕՍ110 պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 4**

1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագիր |
| **Դրամաշնորհի N** | «ԴՏՊ-11414-11018/24» ՍՕՍ110 |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | Հունվար 15 - դեկտեմբեր 2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | Հոկտեմբեր - դեկտեմբեր 2024 |
| **Ներկայացման օր** | 13.12.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Հայկուհի Ղալումյան, ծրագրի համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

1. Ապահովել երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունների և կյանքի հիմնական հմտությունների զարգացում, այդ թվում՝ խոսքային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծառայությունների տրամադրում, մասնագիտական կողմնորոշում, արտթերապիա (ծառայությունը նպաստում է երեխայի հուզական կայունությանը, հասակակիցների հետ շփմանը, ինքնուրույնության, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի) զարգացմանը, վեր է հանում ուժեղ և թույլ կողմերը և այլն), անձի զարգացմանն ուղղված ծառայությունների տրամադրում (քաղաքացիական կրթության, մեդիագրագիտության և այլ խմբակների միջոցով):
2. Ապահովել սոցիալական աշխատանք ընտանիքի հետ՝ շահագրգիռ կողմերի ներգրավմամբ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների, այդ թվում ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով:
3. Ապահովել սոցիալական աշխատանք երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպության հետ:
4. Տրամադրել առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ իրավաբանական խորհրդատեղեկատվական և ուղղորդման ծառայություններ:
5. Տրամադրել ցերեկային կենտրոն հաճախող երեխաներին սննդային փաթեթ:
6. Կազմակերպել երեխաների և ծնողների հետ երեխայի իրավունքների, ծնողավարության հմտությունների, ֆինանսական միջոցների տնօրինման վերաբերյալ դասընթացներ:
7. Տրամադրել հնարավորություն շահառուներին՝ ծառայության որակն անանուն գնահատելու և առաջարկություններ ստանալու համար՝ արդյունքները ներառելով եռամսյակային հաշվետվություններում:
8. Տրամադրել առնվազն մեկ շահառուի անձնական օգնականի ծառայություն՝ ելնելով տվյալ երեխայի կարիքներից:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

**1.** Հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում 102 երեխայի մատուցվել են անհատական և խմբային հոգեբանական ծառայություններ՝ հուզական, հաղորդակցման, վարքային, ցածր ինքնագնահատականի, խմբում ներառվելու խնդիրների, ինչպես նաև վախերի հաղթահարման նպատակով: Իրականացված աշխատանքները նպաստել են երեխաների ինքնավստահության, ինքնագնահատականի բարձրացմանը, խմբում ազատ ինքնադրսևորվելուն, հուզական ֆոնի կայունացմանը, վախերի հաղթահարմանը և այլն:

Եռամսյակի ընթացքում իրականացվել են անհատական լոգոպեդական պարապմունքներ 11 երեխայի հետ, որոնք ուղղված են եղել տարբեր խոսքային խնդիրների հաղթահարմանը (ԽԸԹ, դիսլալիա, միջատամնային սիգմատիզմ՝«ս»,«զ»,«ծ»,«ծ»,«ց», սուլական հնչյունների սխալ արտաբերում, ռինոլալիա, կակազություն): Լոգոպեդական պարապմունքների ընթացքում իրականացվել է հնչարտաբերման շտկում, հնչյունադրում, խթանվել է երեխաների խոսքային և հնչյունային ակտիվությունը, զարգացվել է խոսքի ընկալումը: Ստեղծվել են պայմաններ հնչյունամիացությունների և ձայնանմանակումների խթանման համար: Աշխատանքներ են տարվել լսողական ընկալման զարգացման, պասիվ բառապաշարի ակտիվացման և հարստացման ուղղությամբ: Առանձնակի ուշադրություն է դարձվել արտաբերական, շնչառական վարժությունների

ճիշտ կատարմանը. խոսքի սահունությանը, խոսքի տեմպի ռիթմի կարգավորմանը, խոսքի առոգանությանը, մկանային լարվածության հաղթահարմանը:

97 երեխայի հետ իրականացվել են խմբային հոգեբանական աշխատանքներ հետևյալ մեթոդներով.

- Երեխաների փոխհարաբերությունները բացահայտող «Ես և իմ ընկերները» մեթոդիկա:
- Երեխայի գաղտնի ինֆորմացիան վերհանող «Վերհիշում» մեթոդիկա:
- Երեխայի ինքնաբացահայտման «Պատրաստ ես, ուզում ես» մեթոդիկա:
- Երեխայի ապրումները վերհանող «Բարկության նամակ» մեթոդիկա:
- Երեխայի սեփական արժանիքների գիտակցմանը նպաստող «Ինքնավերլուծություն» մեթոդիկա:

«Ես և իմ ընկերները» հոգեբանական մեթոդն իրականացվել է թվով 12 երեխայի հետ: Մեթոդիկայի իրականացման նպատակն էր նպաստել երեխաների մոտ այն գիտակցման ձևավորմանը, որ իսկական անկեղծ, ամուր ընկերությունը իրենք են կառուցում, իրենք են իրենց հարաբերությունները ստեղծում, ջանք ներդնում ընկերությունը պահպանելու գործում: Մեթոդիկայի իրականացման արդյունքում երեխաները բացահայտեցին, որ իրենք նման են իրենց ընկերներին ընկերասիրությամբ, բարությամբ, խելոքությամբ, անկեղծությամբ, հավատարմությամբ, իրենց ընկեր չեն կարող լինել կեղծավոր, չար, վատ անխելք, ստախոս, չհասկացող երեխաները:

«Վերհիշում» մեթոդիկան իրականացվել է 22 երեխայի հետ՝ պարզելու համար, թե յուրաքանչյուր երեխայի մոտ ինչն է տպավորվել իր կյանքում: 12 երեխա հիշում էին միայն դրական իրավիճակներ՝ օրինակ, մեծերին օգնել, «Արմաթում» հաջողություններ ունենալ, հեծանիվ, սպորտային կոշիկ, հեռախոս ձեռք բերել, առաջին սերը, ծննդյան օրերը, Ամանորը, Վարդավառը, ռազմամարզական ճամբարը, ֆուտբոլ խաղալը: Մյուս 10-ը հիշում էին բացասական իրադարձությունները՝ պատերազմը, նկուղի սոված կյանքը, հոր ոտքի կորուստը, դասընկերոջ պատուհանից նետվելը, պայթուցիկով ձեռքը վնասելը, շան սատկելը, ծառից ընկնելն ու չկարողանալ խոսելը, պատի վրայից փշերի մեջ ընկնելը և այլն: Վերջիններիս հետ իրականացվել է անհատական հոգեբանական աշխատանք:

«Պատրաստ ես, ուզում ես» մեթոդիկայի իրականացմանը մասնակցել է 30 երեխա: Մեթոդիկայի նպատակն է պարզել սեփական նախասիրությունները: Երեխաները 10 տարի անց իրենց ցանկանում էին տեսնել առողջ, հանգիստ, բարի, ազնիվ, հարուստ, ուժեղ: Սիրելի զբաղմունքը հեռուստացույց նայելն է, հեռախոսով խաղեր խաղալը, փայտ կոտրելը, նկարելը, գրելը, կարդալը, ընտանիքի անդամների հետ լինելը: Երեխաները ամենաշատը ոգևորվում էին ծնողների գովասանքի խոսքերից, բարձր գնահատական ստանալուց, ծննդյան նվերներից, անակնկալներից, հարսանիք գնալուց: Երեխաները երազում էին դառնալ բժիշկ, ոստիկան, դերասան, զինվոր, մաթեմատիկոս, երգչուհի, ֆուտբոլիստ, ծրագրավորող, դիզայներ, երեխաների արժանիքներն էին բարությունը, ընկերասիրությունը, անկեղծությունը, աշխատասիրությունը, հայրենասիրությունը, գաղտնապահությունը, կամեցողությունը:

«Բարկության նամակ» մեթոդն իրականացվել է 21 երեխայի հետ, պարզելու, թե երբևէ ինչից են նրանք բարկացել: Երեխաները նշել են, որ բարկացել են, երբ իրենց հրամայել են, նեղացրել, թերագնահատել, ստել, հրել, վիրավորել, բամբասել, գոռացել, ծամածռություններ արել, չեն լսել իրեն, չեն շփվել իրենց հետ:

«Ինքնավերլուծություն» մեթոդն իրականացվել է թվով 12 երեխայի հետ, որի նպատակն էր պարզել, թե երեխաները որքանո՞վ են գիտակցում իրենց արժանիքները և ուժեղ կողմերը: Երեխաները իրենց բնութագրել են հետևյալ հատկանիշներով՝ աշխատասեր, հոգատար, բարի, սիրուն, հանգիստ, նպատակասլաց, ուժեղ, անշահախնդիր: Իրենց մոտ ամենալավը ստացվում է խաղալը, լսելը ուտելը, խոսելը, ծիծաղելը, քնելը, սովորելը, նկարելը, երգելը, պարելը, հեռախոսով զբաղվելը: Բնավորությամբ հիմնականում պարտաճանաչ էին, ազնիվ, ընկերասեր, հանգիստ, համեստ, բարի, գնահատող, կատակասեր:

Երեխաների ընդհանուր զարգացվածության մակարդակը բարձրացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում ծրագրում ընդգրկված 6-18 տարեկան թվով 115 երեխայի համար կազմակերպվել են տարբեր թեմաներով դասընթացներ և ապահովվել է երեխաների մասնակցությունը հետևյալ խմբակներում.

*«Կյանքի հիմնական հմտությունների զարգացում»* խմբակի ընթացքում երեխաներն ուսումնասիրել են հետևյալ թեմաները.

- «Խտրականություն»
- «Վտանգավոր ըոկալումներ»
- «Կոնֆլիկտ: Կոնֆլիկտի պատճառները»
- «Ակտիվ լսելու հմտություններ»
- «Խաղաղ բանակցություններ»
- «Կառուցողական լուծումներ»
- «Փոքր առաջադրանքներ՝ մեծ նպատակների համար»
- ««Ամենակարևորը՝ առաջինը» սկզբունքը» և այլն:

Նշված թեմաների ուսումնասիրումը նպաստել է երեխաների մոտ հանդուրժողականության և ապրումակցման ձևավորմանը, որոշում կայացնելու հմտությունների զարգացմանը, կոնֆլիկտների ժամանակ ի հայտ եկող զգացմունքների ճանաչմանը, դրանք վերահսկելու հմտությունների ձևավորմանը, կոնֆլիկտի պատճառների բացահայտման կարողությունների, արդյունավետ հաղորդակցման հմտությունների զարգացմանը, ակտիվ լսելու հմտությունների ձևավորմանը, իրավիճակին համապատասխան կառուցողական լուծումներ գտնելու հմտությունների և կարողությունների ձևավորմանը, կարևոր գործերին առաջնահերթություն տալու կարևորության գիտակցմանը, առաջադրանքները փոքր, պարզ քայլերի բաժանելու հմտությունների ձևավորմանը և այլն: Բոլոր պարապմունքներն անց են կացվել ինտերակտիվ և խաղային մեթոդներով:

*«Առողջ ապրելակերպ»* - երեխաները ուսումնասիրել են այնպիսի թեմաներ ինչպիսիք են.

- «Հուզական աջակցության ցուցաբերում»
- «Դրական ինքնավերաբերմունք»
- «Սեռային կարծրատիպեր»
- «Առողջ փոխհարաբերություններ»
- «Օգնություն վստահելի մեծահասակից»
- «Ֆիզիկական ակտիվությունը և դրա կարևորությունը»
- «Հիգիենայի կանոններ» և այլն:

Դասընթացի արդյունքում երեխաները սովորել են կիրառել հաղորդակցման հմտությունները որպես աջակցություն ցուցաբերելու միջոց, վերլուծել սեփական դրական որակները, հաջողությունները, ուժեղ կողմերը, գիտակցել սեռային կարծրատիպերը և դրանց շուրջ թյուրընկալումները, հասկանալ փոխվստահության և ապրումակցման վրա հիմնված ընկերության դրական կողմերը, ընկերների բացասական ազդեցությանը հակազդելու հնարավոր ձևերը, ճանաչել վստահելի մեծահասակին բնորոշ հատկանիշները, գիտակցել անհրաժեշտության դեպքում նրան դիմելու կարևորությունը, հասկանալ ֆիզիկական ակտիվության և առողջության կապը, առողջության տարբեր խնդիրների դեպքում հիգիենայի պահպանման անհրաժեշտության կարևորությունը և այլն:

*«Մեդիագրագիտություն»* - խմբակի ընթացքում երեխաները ուսումնասիրել են այնպիսի թեմաներ, ինպիսիք են.

- «Նավարկում ենք համացանցում»
- «Նկարներ և վեբ-խցիկներ»
- «Հաղորդակցություն անծանոթների հետ»
- «Համացանցային էթիկա»
- «Կիբերհետապնդում»
- «Առցանց խաղեր» և այլ թեմաներ:

Նշված բոլոր թեմաներն անց են կացվել ինտերակտիվ մեթոդներով: Արդյունքում երեխաները սովորել են օգտագործել համացանցը անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու և գտնելու համար, ինչպես ակտիվացնել համակարգչի հակավիրուսային ծրագիրը, իմանալ որոնք են վեբ-խցիկները և կարողանալ նկարներն ուղարկել ճիշտ հասցեատիրոջը բջջային հեռախոսի կամ համակարգչի միջոցով, մասնակցել տարբեր թեմատիկ քննարկումների զում հարթակում, խուսափել

համացանցում անծանոթ մարդկանց հետ շփումից, իմանալ ինչ է համացանցային էթիկան, ինչպես չդառնալ կիբերխուլիգանության և հետապնդման զոհ, առցանց խաղեր խաղալու ժամանակ գաղտնի պահել անձնական տվյալները, հասկանալ, որ «անվճար» կոչվող խաղերը երբեմն թակարդներ են երեխաների համար: Երեխաները ձեռք են բերել այլ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

*«Մասնագիտական կողմնորոշում»* - խմբակի շրջանակներում ուսումնասիրվել են հետևյալ թեմաները.

- «Էքստրովերտներ և ինտրովերտներ»
- «Աշխատանք և հանգիստ: Ինչպես ճիշտ պլանավորել օրը և խուսափել գերհոգնածությունից»
- «Կարողություններ»
- «Քայլ դեպի ապագա: Ինչպես ընտրել մասնագիտություն»
- «Հմտություններ»
- «Հաջողության «ոսկյա» կանոնները» և այլ թեմաներ:

Վերոնշյալ թեմաների ուսումնասիրման արդյունքում երեխաները սովորել են բացահայտել յուրաքանչյուրի կյանքում, հատկապես մասնագիտության ընտրության գործում, մարդուն բնորոշ անհատական հոգեբանական առանձնահատկությունները և դրանց դերը, սկսել են գիտակցել օրվա ճիշտ պլանավորման կարևորությունը, ծանոթացել են աշխատանքի հիգիենայի հիմնական դրույթներին, «հմտություններ» և «կարողություններ» հասկացություններին, կարողացել են իրենք իրենց համար առանձնացնել այն հմտությունները և կարողությունները, որոնք անհրաժեշտ են իրենց նպատակներին և երազանքներին հասնելու համար, ձեռք են բերել տարբեր իրավիճակներում ի հայտ եկող դժվարությունների դեպքում դրանք հասկանալու, վերլուծելու և դրանց հաղթահարման ուղիները գտնելու հմտություններ, ձեռք են բերել այլ կարևոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

*«Ֆինանսական գրագիտություն»* - խմբակի ընթացքում երեխաները ծանոթացել են հետևյալ թեմաներին.

- «Ի՞նչ է տոկոսը»
- «Բյուջեի կարևորությունը»
- «Ի՞նչ է շուկան»
- «Անձնական ծախսերի պլանավորում»
- «Ի՞նչու է կարևոր ֆինանսական անկախություն ունենալ և ի՞նչպես հասնել դրան»
- «Ի՞նչպես ճիշտ պլանավորման և խնայողությունների շնորհիվ հասնել նպատակներին»
- «Ի՞նչ է պարտքը: Պարտքի արդյունավետ կառավարում» և այլն:

Պարապմունքների արդյունքում երեխաները ծանոթացել են տոկոսի հաշվման բանաձևին, սովորել են հաշվել գումարի տոկոսը, հասկանալ եկամտաբերությունը, ծանոթացել են բյուջե կազմելու սկզբունքներին, ձեռք են բերել որոշակի փոքր գումար ինքնուրույն կառավարելու հմտություններ, սովորել են թե ինչպես կարելի է ճիշտ պլանավորելու, խնայելու և կառավարելու միջոցով հասնել նպատակներին, ծանոթացել են շուկայի ֆունկցիաներին, պարտքի տեսակներին, դրա՝ այլընտրանքով փոխարինման ձևերին և այլն: Դասընթացի արդյունքում երեխաների մոտ ձևավորվել է գումարը ծախսելու կարգապահություն, ֆինանսական պատասխանատվություն:

Հաշվետու ժամանակահատվածում.

- 74 երեխա մասնակցել է անգլերենի խմբակի: Երեխաների մի մասը զարգացրել է իրենց տարրական պատկերացումները անգլերեն լեզվի մասին, մյուսը մասը զարգացրել է անգլերեն լեզվով շփման և հաղորդակցման հմտությունները, ձեռք բերել նոր գիտելիքներ:
- 12 երեխա ընդգրկվել է կազմակերպությունում գործող արտթերապևտիկ (ձեռարվեստ, վիտրաժ) ծառայություններում, որը նպաստել է նրանց հուզական կայունությանը, շարժումների (մանր և խոշոր մոտորիկայի), երևակայության զարգացմանը, ինչպես նաև նպաստել է երեխաների ուժեղ և թույլ կողմերի բացահայտմանը:

- 3 երեխա մասնակցել է համակարգչային հմտությունների խմբակին, որի ընթացքում երեխաները ծանոթացել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, անհատական համակարգիչներին, դրանց կառուցվածքին, տեքստային խմբագիր MS Office ծրագրային փաթեթին և այլն:
- 43 երեխա մասնակցել է սպորտի խմբակին, ինչը նպաստել է երեխաների ֆիզիկական դաստիարակությունը և առողջ ապրելակերպի պահպանմանը:

**2.** «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՀԲՀ «Իջևան» մասնաճյուղի «Երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների տրամադրում» ծրագրի անձնակազմի կողմից իրականացված իրազեկման միջոցառումների և երեխաների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ, Միասնական սոցիալական ծառայության, բժշկական կենտրոնների, կրթական հաստատությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված թվով 5 նոր ընտանիք ուղղորդվել է կենտրոն՝ երեխաներին կենտրոնի ծառայություններում ընդգրկելու նպատակով:

Ծրագրի աշխատակիցներն իրականացրել են նշված ընտանիքների տունայց և կատարել կարիքների առաջնային գնահատում: Տունայցերի ընթացքում ծրագրի և ՄՍԾ սոցիալական աշխատողների հավաքագրած ինֆորմացիայի, ծնողների և երեխաների հետ զրույցների արդյունքում 8 երեխայի համար կազմվել է երեխայի և նրա ընտանիքի կարիքների գնահատման ձևաթուղթ: Կազմակերպության բազմամասնագիտական թիմի կողմից իրականացվել են վերոնշյալ երեխաների կարիքների գնահատումներ: Արդյունքում, ԿԴԻՀ 5 նոր ընտանիքի հետ կազմակերպությունը կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով 8 նոր երեխա ներառվել է ծրագիր, յուրաքանչյուրի համար կազմվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր՝ կարիքահեն ծառայություններ ստանալու նպատակով:

Հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, կենտրոնում ծառայություն է ստացել 68 ընտանիքի 116 երեխա, որոնցից 36-ը Արցախից բռնի տեղահանված թվով 18 ընտանիքի երեխաներ են: 31 երեխայի մատուցվել են արտակենտրոն ծառայություններ՝ Սևքար բնակավայրում, իսկ 85-ին՝ մատուցվել են ծառայություններ կենտրոնում: Տարբեր պատճառներով ծրագրից դուրս է գրվել 7 երեխա, ծրագրում ընդգրկվել 8 երեխա:

**3.** Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով ծրագրի սոցիալական աշխատողների կողմից ապահովվել է աշխատանքը երեխային շուրջօրյա խնամք տրամադրող կազմակերպությունների, մասնավորապես, «Երևանի Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Մանկան տուն» ՊՈԱԿ-ի և «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հետ՝ երեխաների՝ իրենց կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորումը ապահովելու նպատակով: Նշված շուրջօրյա խնամքի հաստատություններ այցերի արդյունքում հավաքագրվել են թվով 10 ԱԾԽՄ երեխաների տվյալներ, որոնց ընտանիքները բնակվում են Տավուշի մարզում: Նշված բոլոր երեխաները շուրջօրյա խնամքի հաստատություններում ստանում են հատուկ մասնագիտացված խնամք և վերականգնողական ծառայություններ, իրականացվում է շուրջօրյա բժշկական հսկողություն: Սոցիալական աշխատողների աշխատանքի արդյունքում 5 երեխայի ծնող ընդհանրապես հրաժարվել է համագործակցել, մյուս 5 երեխաների ծնողները նշել են, որ չեն կարող ապահովել երեխաների խնամքը տնային պայմաններում՝ հատուկ կարիքներ ունենալու պատճառով:

**4.** Հաշվետու ժամանակահատվածում Արցախից բռնի տեղահանված ընտանիքի թվով 18 ծնող ուղղորդվել է ՀՕՓ, իսկ 5-ը՝ ՀԿԽԸ հագուստ և հիգիենայի պարագաներ ստանալու նպատակով: 3 ծնողի տամադրվել է խորհրդատվություն աշխատանքի ընդունման վերաբերյալ, 14 ծնողի տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:

**5.** Ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում երեխաները (միջինում շաբաթական 110-116 երեխա) ապահովվել են անհրաժեշտ սննդով օրական 1 անգամ:

**6.** Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի շահառու երեխաների ծնողների հետ ծրագրի բուժաշխատակցի կողմից իրականացվել են զրույցներ երեխաների անձնական հիգիենայի պահպանման վերաբերյալ:

Հոկտեմբեր ամսին ծրագրի սոցիալական աշխատողների կողմից Իջևան համայնքի Սևքար, Գետահովիտ և Խաշթառակ բնակավայրերի միջնակարգ դպրոցների 7-12-րդ դասարանների թվով 61 աշակերտի հետ անց է կացվել «Երեխայի իրավունքները և անվտանգության պաշտպանությունը» թեմայով դասընթաց, որի ընթացքում երեխաները ծանոթացել են իրենց հիմնական իրավունքներին և պարտականություններին, երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքին և ՄԱԿ-ի կոնվենցիային, բռնության երևույթին, դրա տեսակներին, բացասական ազդեցությանը և հետևանքներին, սովորել են ինչպես պաշտպանվել բռնությունից և պայքարել դրա դեմ: Դասընթացն անց է կացվել խաղային ինտերակտիվ մեթոդով, դասընթացի ընթացքում ցուցադրվել է տեսանյութ, իրականացվել է ակտիվ խմբային քննարկում: Գործնական աշխատանքի միջոցով երեխաները ամրապնդել են դասընթացի ընթացքում ստացած գիտելիքները, պատրաստել են իրազեկող պաստառներ:

Թվով 20 ծնողի համար կազմակերպվել է «Հոր դերը երեխայի խնամքի և դաստիարակության գործընթացում» թեմայով դասընթաց, որի նպատակն էր ծնողների հետ քննարկել հայ մշակույթում ընդունված հայրության և մայրության մոդելները, մեր հասարակությունում առկա կարծրատիպերը հոր՝ երեխաների խնամքի կազմակերպման և դաստիարակության գործընթացում ներգրավված լինելու վերաբերյալ, հոր ազդեցությունը երեխայի սոցիալականացման գործընթացում: Դասընթացի ընթացքում իրականացվել է խմբային գործնական աշխատանք, տեսանյութի դիտում և քննարկում: Ձեռք բերված գիտելիքի գնահատման համար դասընթացի ընթացքում կիրառվել է նախաթեսթի և հետթեսթի մեթոդը: Արդյունքում դասընթացի մասնակիցների մոտ արձանագրվել է թեմայի շուրջ գիտելիքի միջինում 37% աճ:

18 ծնողի հետ անց է կացվել հոգեբանական դասընթաց «Ի՞նչ է հոգեբանական տոկունությունը» թեմայով: Դասընթացի ընթացքում մասնակիցները ստացել են գործնական և տեսական գիտելիքներ սթրեսի հոգեբանական տոկունության վերաբերյալ, կիրառվել են խաղային, ինտերակտիվ հարց ու պատասխանի (դիտարկման/հարցազրույցի և այլն) մեթոդ՝ ձեռք բերված գիտելիքի չափման համար: Նախաթեստի արդյունքների վերլուծությունը թույլ տվեց, որ մասնակիցների 35%-ը պատկերացում ուներ հոգեբանական տոկունության մասին, իսկ հետթեստի արդյունքները պարզեցին, որ արդյունքում արձանագրվել է 60% մասնակիցների գիտելիքի աճ:

Հաշվետու ժամանակահատվածում թվով 18 ծնող ծանոթացել է ՀՀ Քաղաքացիական օրենսդրության որոշ օրենսդրական դրույթներին, բարձրացվել է ծնողների իրազեկվածությունը իրենց հուզող հարցերի շուրջ, տրամադրվել են անհատական իրավաբանական խորհրդատվություններ:

**7.** Շահառուներին տրամադրվել է հնարավորություն ծառայության որակի մասին անանուն գնահատում իրականացնելու: Ըստ գնահատման արդյունքների՝ շահառուների 100% բավարարված է ծրագրի կողմից մատուցած ծառայությունների որակից:

**8.** Հաշվետու ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող թվով 2 երեխա և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 9 երեխա ստացել են հոգեբանական անհատական և խմբային ծառայություններ: Հաշմանդամություն ունեցող 1 երեխայի տրամադրվել է անձնական օգնականի ծառայություն: Կազմակերպվել է երեխայի տեղափոխումը երեխայի տնից կենտրոն և հակառակ ուղղությամբ անձնական օգնականի ուղեկցությամբ, իսկ կենտրոնում գտնվելու ընթացքում անձնական օգնականի օգնությամբ կազմակերպվել է երեխայի ներգրավումը կենտրոնում կազմակերպվող ծառայություններին՝ խմբակներին, խաղերին և այլն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

| |
|---|
| ԿԴԻՅ թվով 40 ընտանիքի 70 երեխա չէր կարողանում օգտվել ծրագրի ծառայություններից բնակության վայրի հեռավորության և տրանսպորտային ծախսերը հոգալ չկարողանալու պատճառով: Կարևորելով նշված երեխաների ներգրավածությունը ծրագրում՝ կազմակերպության կողմից տրամադրված տրանսպորտային միջոցներով և ծրագրի մասնագետների ուղեկցությամբ իրականացվել է թվով 70 երեխայի այցը կենտրոն և հետ վերադարձը համայնք:<br><br>Փոխանցվել է մեկ երեխայի երաժշտական դպրոցի դիոլի խմբակի վարձավճարը:<br><br>Մեկ ընտանիքի տրամադրվել է գազային ջրատաքացուցիչ, իսկ մեկ այլ ընտանիքի՝ էլեկտրական ջեռոց:<br><br>10 ընտանիքի տրամադրվել է ձմեռային հագուստ և ամանորյա քաղցրավենիքի տուփեր: |

*«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» ՅԲՀ*

*ազգային տնօրեն* *Ս. Սարգսյան*